

Hentchak :

Organe Central

DU PARTI

HENTCHAKISTE.

ՀԵՉԱԿ

Journal Arménien

mensuel

XIX Année

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Որտի անհուն բերկրութեամբ գալիս ենք յայտնելու, որ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԱՐԺՄԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՑ ՄԵԿԸ ԵՂՈՂ ՍԱՍՈՒՆԻ 1894-ի ՅԻՇԱՏԱԿԱԼԻՑ ԱՊՍԱՄԲՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍ ՄՈՒՐԱՏԸ (ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊՅՅԱՃԵԱՆ), 12-ամեայ տաժանելի բանտարկութիւնից յետոյ, այսօր ազատուած՝ դառնում է Կուսակցութեանս Կեդրոնում, Յեղափոխական Գործը վարողի սլառասլանատու պաշտօնով:

ԵՐԵՔ ՏԱՐԲԵՐ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆԵՐ

Գալիք քաղաքական դէպքերը և հոսանքները մասամբ կանխատեսելու և նրանց առնելիք ուղղութիւնը բնորոշելու համար՝ ամենից ապահով ճանապարհը դարձեալ պատմական մէթօսն է:

Ուստաստանի ժամանակակից դրութիւնը աւելի լաւ բնորոշելու և մօտիկ ապագան մի փոքր աւելի պայծառ ընդհանրելու համար՝ անցնենք պատմութեան այն էջերին, ուր Ուստաստանից առաջ խաղի մէջ էին մտել երկու ուրիշ ազգերի բուրժուազիաներ, — Ֆրանսիականը՝ 1789-ին, գերմանականը՝ 1848-ին:

Մէկ դար ու կէսից աւելի էր, որ Ֆրանսիական Etats-Généraux-ն կանչուած չէր: Անտանդիութեան աստիճանի հասած ելեմտական վիճակը ստիպողական, հրամայական էր դարձրել արքայականութեան պաշտպաններին զիջանիլ, դիմել վաղուց ի վեր մոռացուած այդ հաստատութեանը, որպէսզի նրան միջոց գործածէին իրենց դրամական անյիտաձգելի պահանջներին բաւականութիւն տալու և այդպիսով և՛ աւելի ամրապնդելու այն Գահը, որ թւում էր խախտուած: Եթէ ելեմտական սեղմիչ տագնապը չլինէր՝ Հին Կալվինիստների մաքոյն անգամ չպիտի անցնէր ժողովրդից եկած ներկայացուցիչներին մի տեղ գումարուած տեսնելու: Ժողովրդի պատգամաւորները կանչուում էին ո՛չ թէ իրենց ներկայութեամբ և

գործակցութեամբ երկրի բարեկարգութեան մէջ ղեր ստանձնելու, — ո՛չ, նրանց կանչելու շարժառիթը դրա մէջը չէր, այլ՝ այն՝ որ աշխուպետական-ֆէօդալական կարգերի վրայ հիմնուած արքայականութիւնը իր ունեցած նիւթական միջոցներով արեւս անկարող էր ինքն իրեն բաւականութիւն տալու, նա սնանկութեան դուռն էր հասած: Հարկաւոր էր որ ժողովուրդը՝ Երրորդ Գասակարդը (Tiers Etat) մէջտեղ գար և իր քսակի բերանը լայն բանար ու այդպիսով թագաւորութիւնը ազատէր վերահաս վտանգից: Ուրիշ խօսքով՝ դասակարգային գոյութիւնը, դասակարգային կռիւը պահանջում էր որ միւս դասակարգը շարունակէր իր ահա ն միջոցը դառնալ և անխախտ պատուանդանը լինել վերին՝ տիրապետող դասակարգի համար:

Etats-Généraux-ն դուժարուեց Վէրսայում 1789-ին: Երրորդ Գասակարգը ներկայացնողները նոյն այդ դասակարգի լաւ զաւակներն էին, պաշտպան նրա շահերին, զիտակից նրա ձգտումներին: Այդ դասակարգից դուրս եկած՝ ժամանակի դրախտօր օրէնսդէսները և փաստաբանները նրա ներկայացուցչութիւնն էին ստանձնած: Երբ Վէրսայի պալատի մէջ դուժարուած Ժողովի բուրժուազական մասը ինքն իրեն ճանաչեց, զիտակից եղաւ իր ուժերին, ուրուագծեց իր ցանկութիւնները և տեսաւ իր առաջ ցցուած արգելքների ժայռը, նա հէնց առաջին րոպէից սկսեց իր յարձակումը: Երրորդ Գասակարգի ներկայացուցիչները, առանց ժամանակ կորցնելու, այնքան ծարպիկ դառնեցան որ շեշտակե սկսեցին դիմել մի որոշ նպատակի և կարճ ժամանակ անցնելուց յետոյ՝ նրանք ստիպեցին թագաւորական իշխանութեանը ճանաչելու ժողովրդի ներկայացուցիչների իշխանութիւնը:

Այնտեղ՝ ուր կար մի տարր, որ յենում էր պատմական իրաւունքների վրան և կարճ միջոցով ուրիշ տարր՝ որ չէր յարգում այդ իրաւունքները, դրա բնական հեռանկարը պիտի լինէր՝ բռնի ոյժ, յիշատակութիւն, և Ֆրանսիական բուրժուազիան հէնց սկզբից ի վեր այդ ղէնքը բնորոշ . . .

ու վերջնական յաղթութիւնը տարաւ:

Ֆրանսիական բուրժուազիան յաղթեց, որովհետեւ նա հասունացած էր, որովհետեւ ամբողջ ժողովուրդը նրա յետին էր, որովհետեւ նրա առաջնորդները փորձառու և գործնական մտքի տէր էին, որովհետեւ իր ժամանակին նա վարպետի հարուածը տուեց, — Etats Generaux-ն «Ազգային Ժողովի» և «Ազգային Ժողովը» «Սահմանադիր Ժողովի» վերածելով՝ օրէնսդրական իշխանութեան հետ միասին Պործադրականն էլ իր ձեռքերի մէջն ամրացրեց:

Եւրբ մի նոր պատկարգ ինքն իր պահանջներն և իրաւունքներն է դնում ու նրանց բնականութիւնն ապու համար՝ օրէնքներ գծելուց յետոյ, գործադրական իշխանութիւնն էլ իր ձեռքն է առնում — այլևս ամէն բան վերջացած, յաղթութիւնը տարուած է: Այդպէս եղաւ Ֆրանսիական բուրժուազիայի յաղթութիւնը՝ սրանից 117 տարի առաջ:

Փետրուարեան Յեղափոխութիւնը իր խիստ հակահարուածը ունեցաւ Պերմանիայում: Այստեղ իշխանական, թագաւորական թաղերը մէկը միւսի յետեւից երերալ սկսեցին: Ապստամբութիւնը ճարակում էր ամէն կողմ:

Պուժարուեց Ֆրանկֆորտի յիշատակալից Պարլամենտը:

Հարկաւոր էր Պերմանիային տալ «միութիւն և ազատութիւն, բայց միութիւն՝ ազատութեամբ» — այդ էր պատմական այն խնդիրը, որ վիճակուած էր վճռելու և իրականացնելու Ֆրանկֆորտի Պարլամենտին՝ 1848-ին:

Պերմանական ընտրողները մեծ թուով պրօֆէսորներ և ուսուցիչներ էին ուղարկած՝ որպէս պատգամաւորներ: Այստեղ պրօֆէսորներն էին պարտականութիւն ստանձնած իրականացնելու՝ այն ինչոր արեցին Ֆրանսիացի փաստաբանները՝ 1789-ին: Այդ իրողութիւնը ինքնին մի բնորոշիչ զիծ է և պայծառ յոյս է սփռում երկու ազգերի քաղաքական պատմութեան վրայ:

Ֆրանկֆորտի Պարլամենտի անդամները — ի բաց առեալ ծայրաձախ Հեղեկեանները որ թուով շատ փոքր էին — սկզբից ի վեր ընդդիմադիր իր կօւսակցութիւն, կռուող կողմ չը ներկայացրին: Նրանք նոյն իսկ յարձակողական զիրքի մէջ էլ չմտան:

Պրօֆէսոր անդամները, որ մինչև քաղաքագէտի զերի մէջ մտնելը պետական պաշտօնեաներ էին, եղած, իրենց խառնուածքով՝ կարգեր չընող, պայքարողներ չէին: Նրանք մանկութիւնից սովորած էին մէջք ծռել, յարգել հաստատուած իշխանութիւնը, և նրանք այդպէս էին անում ոչ թէ իրենց անձնական շահի տեսակէտից, այլ ու-

րովհետեւ դա համարում էին խղճի մի գործ՝ ուղղամտութեան մի անհրաժեշտ զիծ:

Եւրբ այդպիսի հոգեկան տարրերով սնուող մեծացողները յանկարծ պատահական քաղաքագէտի ծիրանու մէջ մտան, բնական էր որ նրանք խորհրդածութեան առարկայ եղող խնդիրների վրայ ճառէին զուտ տեսական, գաղափարական տեսակէտից, բոլորովին մոռանալով իրականութիւնը:

Չբազմունքով քաղաքագէտներ չը լինելով՝ պրօֆէսորները մոռանում էին որ քաղաքագէտը ամէն բանից առաջ պիտի լինի գործի մարդ և երբեք աչքից բաց չը պիտի թողնի շահերը, կրքերը, ընկերային այն բոլոր յայտնի և խուլ ոյժերը, որոնց հետ ինքը գործ պիտի ունենայ: Քաղաքագէտը պիտի նախատեսի իր ձեռք առած միջոցների, խօսքերի և արտասանած ճառերի հետևանքները:

Պերմանական ոգին, գիտական զարգացումը և պատրաստութիւնը շատ քիչ գեր կարող են խաղալ այնտեղ, ուր պիտի գործի կեանքի բովից անցած, նրա յարուցած դժուարութիւններից զտուած նրբամտութիւնը, փափկանկատութիւնը, չըջահայեցութիւնը և, որ զլիաւորն է, գործնականութիւնը:

Ու քանի որ այդ մեթոդները պակասում էին նրանց, ուստի բնաւ զարմանալի չէր որ կեանքը նրանց գնէր ծանր հիասթափութեան և յուսախաբութեան մէջ:

Բացի զրանից՝ նրանք մոռանում էին մի այլ կարևոր հանգամանք, — պրօֆէսորները ոչ միայն բնաւ չէին հետաքրքրւում, այլև ոչ մի նշանակութիւն էին տալիս ժողովրդական այն կրաւորական գանգուածին, որ թէև ըստ երևոյթին խուլ ու համր է, բայց տուած ըռպէին ամէն ինչ է:

Պերմանիայի մէջ փոփոխութիւններ առաջ բերելու համար՝ պրօֆէսորները ոչ միայն բուն միջոցների կողմնակից չէին, այլ ակնյայտնի կերպով խորշում էին այդ միջոցից: Յառաջացնել յեղափոխութիւն, շարժել ժողովրդական զանգուածները, նրանց արձակել կառավարութեան գէտ, — այդ յանդգնութիւնը Պարլամենտի անդամների մտքովն անգամ չէր անցնում: Նրանք այդպիսի գաղափարներ համարում էին ոճիր, յայտնի աստիճանի յարգում, էին հատուաւորած կարգ ու կանոնը և ցանկանում էին որ կառավարութիւնները իրենք նախաձեռնեն անելու այն ինչոր Պարլամենտը կորոշէր:

Որպէս ուսուցիչական և դրադարանի մարդիկ՝ պատգամաւորների մեծամասնութիւնը հեռու էին

ապրած ժողովուրդից, չէին ճանաչած նրա կասկածները, նրա իրական ձգտումները: Նրանք բնականորեն չէին թէ ինչպէս դադարեցնելու ձեռք բռնեցին ինքնակամ անցնելով ժողովուրդական կրթելի, նախապաշարունակներ, իրական շահերի պրիզմայի (հատուածակողմի) միջից:

Նրանք ժողովրդական զանգուածի մասին չէին էլ մտածում, ընդհակառակը՝ մասնայի շարժման մէջ մտնելուց երկիրը էին կրում: Իսկ ինչ որ վերաբերում է այն կողմի ոյժին՝ որ մի յաղթական ճակատամարտից յետոյ սուրի ծայրը դնում է յաղթուողի կսկորդին և մի բոլորի մէջ վառում է դարեւոր ամենաբարդ խնդիրները, — նրանք ոչ միայն չէին ուզում այդպիսի մի ոյժ առաջ բերել և նրա վրայ յենուել, այլ նրա վրայ մտածելն անգամ ոճիր էին համարում: Նրանք ոյժի պաշտոններ չէին, համոզուած էին որ ոյժի պաշտամունքի առաջը մի օր կը չքանան պատմական բոլոր իրաւունքները, մինչդեռ իրենք ոչ միայն պատմական այդ իրաւունքները տապալուելու կողմը չէին, այլ նոյն իսկ յարգողներ:

«Ամէն ինչ մեզ կապում է մեր հարստութիւնների հետ», ասում է Վահագն, «երկարատե հրեանքանդութեան մեր սովորութիւնը ըստ կամս չի կարող փոխանցուիլ ուրիշ առարկաների վրայ... ոչ մի ճշմարիտ գերման հայրենասէր չի կարող յանկարծ և թեթեւամտօրէն խզել ամէն կապ անցեալի հետ»:

Վահագնը պրոֆէսորի պարզամտութեամբ կարծում է, որ կեանքի յառաջացրած պահանջները իրենք իրենց էլ կկատարուեն, մոռնալով այն առաւել թէ՛ «ձուածեղը չի շինուում առանց ձուերը կտրելու»: Ազատութիւն և միութիւն ըստ պատելը իշխաններից՝ կնշանակէր ձուածեղ ունենալ առանց ձուերը կտրելու:

Վառար չէր կանխատեսել որ Գրանիֆօրտի Պարլամենտը կատարեալ անյաջողութեան պիտի բաղկէր, քանի որ նա չուտածեց ի շ ի ս ա ն ու թ իւ ն, դրական իրաւունքներ ձեռք բերել՝ իր կամքը, իր որոշումները յարգել ապու և գործադրելու համար:

Նա ինքն իրեն մի տեսակ Սահմանադիր Դոկտի միասին է տալիս, մշակում է Սահմանադրութիւն ամբողջ Վերմանիայի համար, բայց մոռանում է ամենից էականը, այն է՝ թէ ո՞վ, ո՞ր իշխանութիւնը գործադրել պիտի տար այդ մշակուած Սահմանադրութիւնը, քանի որ Վերման զանազան փոքր ու մեծ իշխանութիւնները նրա գործադրութեանը հակառակ պիտի լինէին իրենց անմիջական շահերի տեսակէտից:

Պարլամենտի անդամները՝ օրէնսդրական աշ-

խատանքի սկսած ժամանակին՝ շրջնք և հակառակ կողմիցն էին բռնած: Նրանք միամտօրէն այն յոյսը ունէին՝ որ երբ սահմանադրութիւնը կը մշակուէր, կըռհարկուէր, այն ժամանակ նա ինքն իրեն գործադրել տայու առաքինութիւնն էլ կունենար:

Վա մի պատրանք էր՝ որի մէջ ընկան նրանք հէնց սկզբից, պատրանք՝ որից հեռու մնացին Վէրսայի մէջ դուարուողները. սրանք իրենց առաջին գործն արեցին նախ ճանչցնել տալ այն իշխանութիւնը՝ որ մօտիկ ապագային օրէնքներ պիտի մշակէր և գործադրէր:

Իր աշխատանքը վերջացնելուց յետոյ, երբ եկաւ գործադրութեան բոլորն Գրանիֆօրտի Պարլամենտը ծաղր ու ծանակի ենթարկուեց, այլապէս էլ չէր կարող լինել:

Հետեանքը եղաւ նուաստացումն, բէակցիայի դրուելու բարձրացնելը:

Հարկաւոր էր ժողովրդական շարժում յառաջ բերել, բոլորն այդ էր պահանջում, բայց Գրանիֆօրտի դերակատարները իրենց դերերի մէջը չէին:

Ժողովրդական ինքնաբերական շարժում էլ չէր կարող յառաջ գալ, որովհետեւ բացի կըրթութեամբ դասակարգերից և մի քանի մեծ քաղաքների ազգաբնակչութիւնից, ժողովրդի ստուար զանգուածը մնացել էր բոլորովին անտարբեր դէպի Գրանիֆօրտի Դոկտի աշխատանքները: Իրաւ է կար մի ընդհանուր հետաքրքրութիւն, բայց ոչ համայնաժախ համակրութիւն, ոչ զգլխից ողորութիւն, — Գրանիֆօրտի մէջ կատարուածը մի պատմութիւն չէր, այլ իսկական պատմութեան հեղեղական նմանութիւնը:

Գրանիֆօրտի Պարլամենտը կառավարութիւնները իր դէմ ունէր՝ առանց ժողովուրդը իր կոնակին ունենալու: Վէրսայի Դոկտը դրա հակադրական էր եղած՝ նա ժողովուրդը իր կողմն էր դըրաւած և նրա վրան էլ յենուած:

Ընդհանրութիւնը, միջակութիւնը իրենց կնիքը դրեցին Գրանիֆօրտի Պարլամենտի վրայ և այդ պիտի տապալուեցուեցաւ որ բուրժուական Վերմանիան չէր կարող իր միութիւնը և ազատութիւնը ձեռք բերել ի ս ա ղ ա ղ ճ ա ն ա պ ա Ր հ ո վ:

Գրանիֆօրտի Պարլամենտը մի դարաշրջան է՝ դէպի ուր յանգեցան մէկ ու կէս դարու ոյժերը: Նա վիժեց և այդ վիժումով բացուեց մի ձգնաժամ, ու յառաջ՝ եկաւ Նոր Վերմանիան, որ իր Միութիւնը և բուրժուական ազատութիւնը ձեռք բերեց, Լատալի ասածի նման, կրակով ու սրով:

Գրանիֆօրտի Մեծ Զեղափոխութիւնից 117 տարի, իսկ Գրանիֆօրտի Պարլամենտից 58 տարի

յետոյ՝ Տաւրիկեան պալատում՝ գումարուեց Ռուսական Գուման, Ռուսական առաջին Պարլամենտը, Հակառակ զարիզմի գործ դրած ամենափայլազ միջոցներին՝ այնուամենայնիւ Վահր խարխուլ վիճակ էր ներկայացնում։ Բանտ, աքսոր, կախաղան, մասնակի և ամբողջական կոտորածներ՝ դործադրուած ամենալայն չափերով, սրանք բոլորը անկարող եղան կայունութիւն խոստանալ երեւուած բռնակալութեանը։

Յարը խոնարհեց Յեղափոխութեան առաջ և ստիպուեցաւ Վուման գումարել տար։

Բւլբոկրատական կաղապար ունեցող՝ ժողովրդական quasi—ներկայացուցչութեան այդ ծայրատուած հաստատութիւնը պիտի զար, հեղինակների կարծիքով, խաղալիք դառնալու, միջոց ծառայելու վարդավուած երկիրը և մերթերը հանդարտեցնելու ու՝ որպէս խրատ ու լակ՝ ժողովրդին խաբելու։ Վումայի գումարումից առաջ ձեռք առնուած խիստ միջոցները, ոստիկանական հսկողութեան և մտրակի տակ կատարուած ընտրութիւնները որոշ էին դարձնում բուլբոկրատիայի մտքի այդ հակումները։

Բայց մի՞թէ չէր կարող հակառակն էլ պատահել։ Հին կարգերի պաշտպանները այդ էլ էին աչքի առաջ ունեցել։

Հրատարակուեցան «Հիմնական օրէնքները»։ Պատիւը, վարկը կորցրած մի կառավարութեան միայն յատուկ, ամենաստորացուցիչ և վաշխառուական տոկոսի գնով, մի քանի միլիարդներ էլ արքունական դանձարանը մտան։

Յարիզմը իր պատրաստութիւնը տեսած էր, ի հարկին կուրի բռնուելու։ Ըստ երևոյթին այլևս երկիւղ չկար։ Թէև ոչ բուն ժողովրդական ներկայացուցչութիւն՝ թէև ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղանի բուհարկութեան սկզբունքներով առաջ չեկած մի հաստատութիւն—բայց Վուման առաջին օրից իսկ գրումեց լայնածաւալ համակրութիւն իր կորովի ընթացքի համար։ Նա մի ընդհանուր յուսադրաւոր դարձաւ շատերի համար։

Բայց հարց, Տաւրիկեան պալատում գումարուած Պարլամենտը կլինի՞ երկրորդ հրատարակութիւն Ֆրանկֆորտի պարլամենտի, թէ՞ նա իր դերը կը կատարի և այդպիսով կարգադրանի իր վրայ դրուած յոյսը։

—Մենք բնաւ հակուած չենք կարծելու որ Ռուսական բուրժուազիան՝ ներկայացուած կադէտների (ռամկավարական-սոցիալադարականներ) կուսակցութեամբ այդքան անընդունակութիւն ցոյց կտայ։ Քաղաքակրթութիւնը փորձառութիւնների կոյտեր ունի դիպած։ Գիտութիւնը ահագին նուաճումներ ունի արած։ Կադէտները պէտք է որ օգտուեն այդ կատարուած դասերից՝ թէև ուրիշ ժողովուրդների կեանքից առնուած։ Վուման չի լինիլ Ֆրանկֆորտի Պարլամենտ՝ որովհետև իր մէջ ունի յուսադրելի բազմացուցիչ տարրեր էլ, որովհետև յարուցուող խնդիրները ժողովրդական ընդհանուր բնաւորութիւն ունին, որովհետև նրա մէջ կան պատկառելի թիւ կազմող գիւղացիներ և գործաւորներ, որովհետև «ծայրագոյն ձախը»,

«Աշխատանքի կուսակցութիւնը», Ֆրանկֆորտի Հեգել-եանների չափ անգոր չէ։

Բայց եթէ Ռուսական Վուման Ֆրանկֆորտի Պարլամենտ չի լինիլ, կը լինի՞ նա 1789—1792-ի Ֆրանսիական ժողովները։ Խնդիրը հենց դրանումն է։

Վուման մինչև ցարդ, այսպէս ասած, գտնուում է Ֆրանկֆորտի Պարլամենտի շրջանի մէջ, — արտասանուած ծառերը գեղեցիկ, երբեմն հրապուրիչ իսկ են, ներկայացուած նախագծերը բաւականին հարուստ, բազմակողմանի. արտայայտուած մտքերը աւելի խոր են՝ քան մակերևոյթային։ Արտաքին զարդը տեղի է։ Եթէ նոր Ռուսիան Վումայի մէջ չի կաղապարուում այնպէս՝ ինչպէս կը ցանկանար «Աշխատանքի կուսակցութեան» միանգամ, կամ մի սօցիալիստ, գէթ նա կազմուում է այնպէս՝ ինչպէս որ կուգէր դարերից յետոյ անթնացող մի բուրժուազիա՝ որ ուրիշների փորձառութիւնը ունէր, որ իր կաշիի, իր շահերի համար ստիպուած էր միւս դասակարգերի էլ շահերը աչքի առաջ առնել՝ յայտնի չափով։ Ամէն ինչ այժմս բառերի, նախագծերի, ընդհանուր արամագրութիւնների շրջանի մէջ է, իրական գործ, մարմին առած, թանձրացած ոչինչ դեռ չկայ։

Վուման դեռ ևս ինքնագոյութեան աղատ և անկախ իրաւունք ձեռք բերած չէ։ Տակաւին ժողովրդական միահեծանութեան ո՛չ մի ստորագրելի ընդունուած և գործադրուած է, ամէն ինչ գտնուում է անստուգութեան, յիշելու՝ րոպէների մէջ։

Վումայի ճանապարհը, սակայն, գծուած է — իր գլխաւոր որոշումները անցնելուց յետոյ՝ նրան մնում է կամ ինքնասպանութիւն կամ խօսքից գործի անցնել։

—Եւրե Յարի կառավարութիւնը կարհամարհի և չի ընդունի քուէարկուած որ է որոշում ու կյամաւի իր բացարձակութիւնը պահել, այն ժամանակ կնիւկայանայ հոգեբանական րոպէն երբ Վուման պատրաստ պիտի լինի՝ Ֆրանսիական օրինակին հետեւելով՝ իրեն յայտարարել Սահմանադիր ժողով և յեղափոխական գործունէութեան մէջ մտնելով՝ ապստամբութեան նըշանը տալ ու ձգտի իր սեպհական որոշումները իր ձեռքով գործադրել՝ որպէս գործադրական իշխանութիւն։

Այդ կտրուկ քայլովն է միայն, որ նա չի գործիլ Ֆրանկֆորտի Պարլամենտի սխալը, ու ինքն իրեն փրկելով՝ պատմական իրական գործ կատարած կլինի։

Եթէ Ռուսական առաջին Պարլամենտը չկարողանայ բուլբոկրատիային ստիպել իրեն առաջը խոնարհել և անձնատուր լինիլ ու՝ բացի օրէնսդրականից՝ գործադրական իշխանութեան վերահսկողութիւնը իր ձեռքը չառնի, — նա կորած է և իր անկումով ո՛չ միայն կը բերի ընդհանուր յուսախաբուութիւն, այլ Ռուսաստանի բուրժուազիան գրանով կը գնի իր քաղաքական գործունէութեան վերջակէտը։

Ու նրանից յետոյ պատմական միակ դերակատարը կմնայ Ռուսական ընդհանուր պրօլետարիատը։ Յեղափոխութիւնը այնուհետև կառնի ուրիշ ուղղութիւն, և մի օր ցարիզմը՝ իր բոլոր օրգաններով, կը քաշուի կառաւիտատեղին ու guillotineը իւր մաքրիչ գործը կը կատարի — այդպիսով ընդհանուր դրամայի չորրորդ գործողութիւնը կը վերջանայ ու կարմիր Վարագոյրը կիջնի։

Շ Ն Ո Ր Հ Ե Կ Ե Լ Ի Ք

Այլ փութամ հրապարակաւ խորին շնորհակալութիւնս յայտնելու այն բոլոր ընկերներու, բարեկամներու և հայրենակիցներու, որոնք ազատմանս առթիւ, թէ՛ հեռագրերով և թէ՛ նամակներով, իրենց խնդակցութիւնը յայտնեցին:

Մ Ո Ւ Ր Ը Տ

Փ Ա Ր Ի Զ

Կ Ա Ր Մ Ի Ր Տ Ո Ղ Ե Ր

Այլիկիայի մեր թղթակցի տուած հակիրճ տեղեկութիւնները մասնաւոր ուշադրութեան են արժանի — նրանք Կ ա Ր Մ Ի Ր Տ Ո Ղ Ե Ր են: Անպաճոյճ բառերով հիւսւած իր ամէն մէկ պարբերութեան մէջ արտացոլանում է մի յուզիչ, մի դառն իրականութիւն, որ ճշգրտօրէն պատկերացնում է սուլթանականութեան քաղաքական փրկսփախուցութեան չարանեղ ոգին՝ ինչոր վերաբերում է հայերիս:

Վերլուծենք համառօտակի այդ ուշագրաւ խօսքերը:

— Եւրո առաջին անգամ «Տանն Այլիկիոյ» կաթողիկոսը ընտրուեց և կիլիկեցիները արտաքայ կարգի ոգևորութեան մէջ մտան, կարծես թէ այլևս ամէն վէրք գոցուած, ամէն խնդիր վերջացած էր, մենք այն ժամանակ շնչակեան Կոստանկութեան Ամերիկայի օրգանի՝ «Երիտասարդ Հայաստան»ի մէջ դիտել տուինք, որ Տանն Այլիկիոյ կաթողիկոսութիւնը ներկայումս որ և է կերպ չէր կարող բաւականութիւն տալ կիլիկեցու կենսական պահանջներին: Կրօնական հաստատութիւնները ինչ կարգի էլ որ լինեն, ժողովուրդ փրկելու, նրա տնտեսա-քաղաքական պահանջներին որ է չափով դոհացում տալու բնոյթը և միտումը չունին, մանաւանդ մեր օրերում:

Այլիկեցին շատ շուտ մոռացաւ իր գլխով անցածը և փոխանակ ու զի զ ճանապարհով շարունակելու իր ընթացքը, նա իրեն թոյլ տուեց կըլանուելու աստիճան ընկնել եկեղեցականութեան քղանցքների տակ:

Այժմս տխուր չափը կայ, իրականութիւնը եկաւ. հաստատելու որ ո՛չ թէ մենք էինք սխալուողը, այլ իր կարծեցեալ առաջնորդները. պարզ չէ՞ որ մենք աւելի լաւ էինք ծանաչած իր վերքերը և մատնանիշած նրանց դարմանը, քան այն անձերը, որոնք իրեն քարոզեցին մոռանալ դեռ բոլորովին չչորցած արեան գոլորշիները և համակերպել . . . ա ղ ո թ ե լ ո Վ:

Աւելի քան դատապարտելի էր Կաթողիկոսի ընթացքը Պոլսոյ մէջ: Նա այդտեղ ցոյց տուեց մի ծայրահեղ սուլթանամոլութիւն: Աւետարանից, Գործք Առաքելոցից էլ կտորներ չմնացին որ մէջ չբերուէին ու չբացատրուէին: Այդ բոլորի միտումնական էր, — յորդորել ժողովուրդին հաւատարիմ մնալ Սուլթանին, կատարել նրա հրամանները, հեռու մնալ ամէն տեսակ «միասնակար» (յեղափոխական) տարրերից և ամէն բանի մէջ ապաւինել Սուլթանի հայրագործ խնամքին: Խապայեանը Համիդի ունեցած իշխանութիւնը

վերին իշխանութեան մի մասնիկը համարելով՝ իր եզրերը գնելուց յետոյ՝ ճշմարտութիւնը գտնողի պէս յաղթականօրէն եզրափակեց, ուրեմն, «Եւ որ ընդ իշխանութեամբ է ի հնազանդութեան կայացէ, զի ի Տեառնէ է ամենայն իշխանութիւն»: Քանի որ ամէն իշխանութիւն գալիս էր վերեւից՝ Աստուծոց, իսկ այդ Աստուծա՛ր իր իշխանութեան մի մասնիկը տուել էր Համիդին ու իր կամքը արտացոլացնում էր նրա բերանով, հայ «հաւատարիմ հօտ»ին ուրիշ ոչինչ չէր մնում անել, եթէ ոչ լինել հնազանդ, կամակատար ծառայ, որպէսզի ինչպէս դարձի աստուածապաշտ քրիստոնեայ՝ արժանի լինի Երկնից արքայութեանը և անթառամ ու երանաւետ երջանկութեանը»:

Կաթողիկոսի ունեցած աշխարհայեացքի հետ ի մօտոյ ծանօթ լինելով՝ մենք պնդած էինք որ իր արարքը «ի օ լ ի թ ի ք ա» չէր. ո՛չ էլ բռնութեան ճիրանների մէջ մտնողի հարկադրուած շողորթութիւններ, ո՛չ, այլ դա մի ամբողջ տեսութիւն էր, որ հայեցակէտն էր կազմում մեր ժամանակակից հոգեւորականութեան մեծ մասին:

— Մեզ ի՞նչ հարկաւոր է Հայաստան. մեր ունեցածը ո՛չ մէկ ազգ ունի: Անգլիան իր մեծութեամբը ունի՞ մեզ չափ սրբատեղիներ նոյնը՝ Ֆրանսիան, Գերմանիան . . . Մի կտոր հաց ուտելով պահենք մեր հիկեղեցին, մեր սրբավայրերը և դրանով միւս աշխարհում էլ կունենանք այն փառքը, ինչոր ունինք այստեղ . . . Եւ վերջապէս ի՞նչ իրաւունքով մենք դէմ կանգնենք օսմանցիներին, ապստամբները, ռաբի եւնեք, ինչո՞ւ համար, Հայաստանի՞, — բայց այդ Հայաստանը նրանք մեզինք չնն առել, այլ մեզինք յափշտակող Սելջուկներից, որոնք այլևս գոյութիւն չունեն, ուրեմն մենք ամէն իրաւունք կորցրած ենք Հայաստանի վրայ և օսմանցիներից էլ յետ պահանջելու որ և է իրական փաստ չունենք: Մեր գործը պիտի լինէր Սելջուկների հետ, բայց նրանք էլ մեռած են . . .» Այս էր տեսութիւնը Հայկական Խնդրի առթիւ Երուսաղէմի միաբանութեան՝ դեռ 1890-ին, Կարնոյ առաջին կոտորածից, Գում-Գաբուի առաջին Ցոյցից յետոյ: Եւ դա ո՛չ թէ մի վանքի պարսպի մէջ պարսկալուծ կարծիք էր, այլ այդպէս էր քարոզուած թէ՛ Հայաստանի դատական կողմերից եկած բոլոր ուխտաւորներին՝ «հաջներ»ին, «մահտեսներ»ին և թէ՛ դպրոցական աշակերտներին:

Մեր հոգեւորականութեան և Հայկական Խնդրի յարաբերութիւնների մասին երկար չենք ուզում կանգ առնել, եթէ ոչ մէջ կբերէինք դեռ մօտեւս կատարուած աղետալ մի գրամա, ուր մեր հոյակապ ընկերները զոհուել են այդ դատակարգի մէկ ներկայացուցչի քաղաքացիական հայեցողութիւններին . . . Մի երկայնաբոյնց՝ ժողովուրդի բարօրութեան համար իրենց անձը մոռացած երկու երիտասարդների թուրք ոստիկանութեան է մատնում իր «պարտականութիւնը կատարելու», իր կրօնաւորի «խիղճը» հանդարտեցնելու տեսակէտից:

Պոլսից Այլիկիա վերադառնալուց յետոյ, Սուլթանի շնորհած ունկնդրութիւնից՝ և նրա իժական մի քանի խօսքերից ելքաբացած՝ կաթողիկոսը ո՛չ միայն Սուլթանի ողջոյնների ուղերձներովն էր դիմաւորում «եկեղեցասէր» հայ ժողովուրդին, այլ մի կա-

տարեալ արշաւանք էր որ սկսեց «Ֆրաստար» տարրի յեղափոխականների դէմ, բայց էի բաց յայտարարելով որ ոչ միայն նրանց խօսքերին չպետք էր լսել, այլ նրանց տուն իսկ չընդունել, նրանց հետ որ և է յարաբերութիւն չանել:

Չենք ասում թէ Վեհափառ Վաթիկանի քարոզածները հետեւանք չունեցան. ոչ, մենք ընդունում ենք որ, դժբախտաբար, դեռ մեր հոգեւորականութիւնը որոշեալ ազդեցութիւն ունի հայ ժողովրդի զանազան խմբերի վրան. եթէ ոչ, մի լարտադրաց Օրմանեան այսօր վաղուց գործած կլինէր աղբանոցի անդունդը:

Հիմա հաշիւները մարքելու համար աւելի պայծառ օրեր ներկայացան, ո՞վ որի՞ն խաբեց. Սուլթանի ներքին քաղաքականութիւնը մազաչափ շեղուեց. խապայտան. Վաթիկանի և նրա մենտոր Ճիզուիթածին Օրմանեանի ստրկամտութիւններից — երակտնութիւնը ասում է որ ոչ:

Տաճիկ կառավարութիւնը եւրոպական վերնիճի տակ պահել է իր ասիական խորամանկութիւնը. նա հայ ժողովրդից աւելի լաւ է ճանաչում նրա հոգեւորական պետերին, զեկավարիչներին. և եթէ երբեմն ներանց ժպտում է, այդ միայն նրա համար և այնքա նով, որպէսզի իր գծագրած մի նպատակին կարողանայ հասնել. նրանց իր գործիքը դարձնելով, մի անգամ այդ նպատակին հասնելուց յետոյ, նա ամենայն աներկսութեամբ մի կողմ է շարտում այդ անորդ գործիքներին և դարձեալ շարունակում իր ուղին՝ մինչև ուրիշ արգելքներ ելնելը:

Արիւնիւն համեմատաբար յուզուած վիճակ ունէր, այդ ժողովրդի մէջ դեռ չէր մեռած քաջութեան ոգին, նա կարող էր «դրսից եկածներ» ին լսել, ուստի հարկաւոր էր խաղաղեցնել և դէպի դրսից եկածները անպատահութեան կասկած ներշնչել, ու մէկը միւսից բաժանելով, մէկը միւսի դէմ յարուցանելով հասնել իր նպատակին:

Եւ Սուլթանը իր փայփայած նպատակին հասաւ, որքան որ դա կախումն ունէր իր ճարտիկութիւնից և իր գործիքների կտրող ընդունակութիւնից:

Բայց ինչ է ուզում Սուլթանը, դէպի ուր է հասնում նրա միտումը: Այդ խնդիրը մենք մի քանի անգամ պարզել ենք՝ նոյն իսկ Սուլթանի իր բառերովը, դեռ կարողինք ուրիշ անգամներ ելլ. — Հայի կալուածները նա «գրաւելու» կը միտի գալիք մուհաճիրներու համար. — Մեր ընկերոջ այդ մէկ նախագիտութեան մէջ մի ամբողջ քաղաքականութիւն է պատկերացած իր դժոխային բոլոր կողմերովը, և նոր չէ որ մենք այդ իրողութիւնը մատնանիշած՝ ահազանգը զօղանջած ենք: Եւ այս անգոր մի հրաշք էր:

Չի՞ գողում այդ նախագիտութեան առաջ հայ երիտասարդը, հայ աղամարդը, իր քաջասիրտը, — նա՞ որ մոռանում է իր էութիւնը և ձեռքերը արեան մէջ թաթախում, կտտանքի ամեն ուրուական կանխապէս իր աչքի առաջ առնելով, որ պատրաստ է իրեն դնել որպէս հրամայական արարականութիւն, որպէս մի հարազատ աշակերտ Կանտի՝ մի նուաճուող, հարստուող, տարրական իրաւունքից զուրկ, բնաջնջումի անդունդի առաջը կանգնող մի ժողովրդի համար:

Ո՞ր մի վայրագ քաղաքականութիւն է որ գործադրուել է միայն պատմութեան ամենէն բարբարոս ժամանակներում ամենադաժան ձեռքերով: — Սպաննել մի

ժողովուրդ՝ որովհետեւ նա իր տիրապետութեանը վտանգաւոր կարող է լինել և նրա տեղը բնակեցնել մի ուրիշ՝ որովհետեւ սա իրեն չափին աւելի համապատասխանը, աւելի յարմարագոյն է: Դա ուժի տիրապետութեան նշանաբանն է իրաւունքի վրայ իր բոլոր կատաղութեան, իր ամբողջ մերկութեան մէջ:

Արիւնիւն նոր չէ որ թուրք կառավարութեան աչքին փուշ է դարձել: Կրէտէից գուրս եկող մ ու հ ա ճ ի ը ն ե ը որոշեալ նպատակով Արիւնիւնի մէջ վերաբնակեցան: Վերջերս դրսից ն ե ը ս խաւաղ ի ս լ ա մ ն եր ի հոսանքը դէպի այդ կողմն է դարձուել՝ մասնաւոր հոգատարութեամբ:

Ե հարկէ խնդիրը ոչ մի քանի տասնեակ բանտարկեալների և ոչ էլ եկեղեցական-վանական կալուածների յափշտակութեան, գրաւման խնդիր է: Մենք ինքներս եկեղեցական կալուածների գրաւման կողմն ենք պետութեան կողմից. բայց այն պետութեան՝ որ կաղաւաճ է ժողովրդի ձեռքով, գործում է ժողովրդով և ժողովրդի համար, և ոչ թէ այն կառավարութեան, որ առաջ է գալիս բռնակալութեան անունով և յափշտակութիւններ է անում բռնակալութեան սիւները ամրացնել ձգտող տարրերի համար:

Խնդիրն այն է թէ մի ժողովուրդ ինքնագոյութեան իրաւունք պիտի ունենայ. պէտք է յարգել մի ազգի պատմական անհատականութեան իրաւունքը՝ թէ՛ ոչ, թո՞ւ պիտի տալ որ մի բռնապետ անվերջ կերպով կապտի, կողոպտի մի ժողովրդի պատմական հասարակական բոլոր իրաւունքները, և այդ մինչև բնաջնջուելու աստիճան:

Աւ սրա համար է որ ասում ենք թէ՛ այս հրատապ խնդիրների յուզման ժամանակ ժողովրդի հետ չեղողը, նրա կողքին կանգնել չուզողը՝ բռնաւորին բարեկամ լինել ասել է:

Իսկ արեան այս սողունը, — կարգացէ՛ք, «կառավարութիւնը շատ մեծ պատրաստութիւններ տեսած, ամեն զգուշութիւններ ձեռք է առած. Արիւնիւնի մասնաւոր կասկած ունի»: — Այո՛, բռնութեան ծայրագոյն տրամադրութիւնները գործադրելուց յետոյ՝ Համիդը դեռ բոլորովին վստահ չէ, նա դեռ կասկածում է թէ հայը կարող է այդ բոլորի միջից անցնելով, իր կենսականութիւնը պահել, ուրիշն էլ աւելի աղբու միջոցներ ձեռք առնել. օսմանեան աւանդական քաղաքականութեան ստուերից կառչել, որպէսզի որքան կարելի է շուտով «Տաւրոսի լեռնաշղթան անպատճառ օսմանցիներով բնակեցնուի»:

Համիդը դեռ կարող է իր դուռերը լարել, բայց հայ Յեղափոխութիւնը տակաւին մեռած չէ, նա կայ, և նա ցոյց կտայ որ արգարե կայ, և տուած րոպէին իր դերը կը կատարի՝ ինչ գնով էլ որ լինի:

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

ՆԱԽԵԿ ԳԻՒԼԵԱՆԻ

Բանի՛ մը ժամանակէ ի վեր Արիւնիւնի վերջապահ ծանրանալով վրայ է:

Սոյ՛ վանքը թէ՛ ա՛ն անունով յազարակ մը ունի Հատանց ի վեր:

Եւ ժամ կառավարութիւնը գրաւելու կը միտի գալիք:

Այդ ագարակը տարուէ տարի վանքը կը ցանէ ու կը հնձէ: Թէեւ մէկ մասը «արաղիի խալիյէ» եղած է:

Պաշտօնական կերպով Կաթողիկոսին հեռագիր է տրուած այս առթիւ:

Կաթողիկոսը քաջութիւն չունեցաւ հեռագրահրաժարականը տալ. — «Քանի թշնաքը պիտի առնէք, որ վարդապետաց ու որոշ մանկաներու հացը կը հայթաթէր, որ բնմն ուրիշ ճար չունիմ, ընդունեցէք հրաժարականս ու ինձ ալ վանք մը ցցուցէք: որ քաշուիմ՝ հանգիստ կեանք մը անցունեմ»:

Պատարարըը հեռագրած է, յոյս տալով թէ մօտ օրէն կը կարգադրուի շնորհիւ Սուլթանին:

Կաթողիկոսն քանի մը վարդապետներով Ատանայ գալով՝ հան կապակէ. եթէ երբեք ետ չտրուի, մտադիր է Կիլիկիոյ բոլոր եկեղեցիներու բանալիները յանձնել կառավարութեան:

Եթէ Թշնաքը ետ չտրուի ու բանալիները յանձնուին, հաւանականօրէն, ընդհանուր մը աւելի ունենալ:

Հայէպի մէջ՝ բաւական բանտարկեալներ կան՝ Ատանայի, Ուլիի, Հաճնի, Գերմանիկի (Մարաշի):

Կառավարութիւնը շատ մեծ պատրաստութիւններ տեսած, ամէն զգուշութիւններ ձեռք է առած: Կիլիկիայէն մասնաւոր կասկած մը ունի:

Կիլիկիայի բոլոր ժողովուրդը ձանձրացած է, թուրք ժողովուրդը նոյն խել: Մէրսին մէկ-երկու շաբաթ առաջ աղայ մը ձերբակալուած է: Այդ աղան Եւրոպա բարեկամ մը ունի եղբոր՝ կըսուի թէ իրեն ազատական թերթ մը ուղարկուած է և այդ թերթը կառավարութեան ձիրանը անցնելով՝ բանալը դրած ևն խեղձ աղան:

Արտասահման գտնուողները ազատ են՝ և՛ կը կարծեն թէ այս կողմերն ալ ազատ է, ինչ անխոհեմութիւն, արտասահման գտնուող հայրենակիցներուն կը թելադրենք՝ որ քիչ մըն ալ մեր տեղական պայմանները ի նկատի ունենալով՝ զգուշանային այդ տեսակ յախուռն վտանգաւոր ու անզգոյշ քայլեր առնելէ:

ԿԻԼԻԿԵՅԻ

ՄԱՅԻՍ 10 (Հ. Տ.), 1906

ՍԵՒ ԾՈՎԻ ԱՓԵՐԻՑ

ՄԱՅԻՍԻ ՄԻՆԸ ԵԱԼՓԱՅՈՒՄ

Թուրքիկ թերթերը շատ վերջին թուերից քաղաքի և նրա շրջակայ կալուածների բանուորներին և ազգաբնակչութեան հրաւիրում էին սօսել Մայիսի Մէկը այս տարի աւելի շուքով, աւելի փառաւոր քան անցեալ տարիները: Այս ազգաբնակչութիւնը, ինչպէս և սպասելի էր, բաւականին գրգռեց մեռնելու րոպէներէ մէջ խորացող կառավարութեան կամակատար ոստիկանների բիրտ ջրերը: Այս պատճառով, մասամբ նախապէս երկիւղ ազդելու նպատակով՝ հասարակութեան, մասամբ էլ յեղափոխութեան ազդեցութիւնը թուլացնելու շիտաւորութեամբ, նա կանխապէս, «սե հարիւրակներին» բերանով, որպէս պատասխան և ժխտում մը յեղափոխութեան յարտարարութեանը լռութիւն տարածեց թէ ապրիլի 23-30-ին պէտք է խուսափուի թիւներ իննն և տները մէջ խողովողների խտնելիքէն:

Երիտասարդութիւնը: Այդ առթիւ Ռուս. Սօցիալ. Դէմոկրատ Բան. կուսակցութեան տեղւոյս կողմակերպութիւնը դիմեց Հնչակեան կուսակցութեան մասնաճիւղի վարչութեան, որ նա, յամենայն դէպս, պատրաստ ունենայ իր մարտիկ խումբը և եթէ աւելորդ զէնքեր ունի՝ իրանց ևս տրուի ինքնապաշտպանութեան համար:

